

Իսրայելեան բանակը հաղորդեց, որ պաղեստինեան Համաս կապ-մակերպութեան բարձրաստիճան մէկ ղեկավարը՝ 35 տարեկան Ալի Պատրանը ձերբակալած է երէկ Ալյաթի շրջանին մէջ: Իսրայել կ'ըսէ, թէ Պատրան ահաբեկչական արարքներու գլխաւոր պատասխանատուներէն մէկն է վերջին տարիներուն: Պատրան նախապէս քանի մը անգամ բանտարկուած է, ապա ազատ արձակուած: Ան ձերբակալուած է Նապլուսի մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՌԻԱԿՆԵՐԵՆԻ ՄԵՋ

#### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՅԵՅԱԲ ՌԱՅՍԻ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրիի հաւանաբար այսօր յենամիջօրեան վերադառնալ Պէյրութ: Ան Ռաշիդի կողմէն մէջ երէկ տեսակցութիւններ ունեցաւ Միացեալ Նահանգներու ազգային անվտանգութեան հարցերու խորհրդակցական Զոնտոլիկա Ռայսի, արտաքին գործոց նախարարի Միջին Արեւելքի հարցերու օգնական Տէյվիտ Սաթրֆիլտի եւ ամերիկեան Զոնտոլիկա խորհրդարանական յանձնախումբերու հետ:

#### Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԿԱՆԱ



Հ. Յ. Դ. ի գետնադած ծաղկեպսակը

Կանայի սպանդին վեցերորդ տարեկիցին առիթով, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակու իւն մը այցելեց Կանա եւ մասնակցեցաւ Ամալի կազմակերպած իշխանակի ձեռնարկին: Պատուիրակութեան անունով խօսք առաւ նախկին նախարար եւ երեսփոխան Փաք Չուխատարեան: Ան հարուստ անվերապահ զօրակցութիւնը յայտնեց իսրայելեան բռնարարներու ենթարկուող պաղեստինցի ժողովուրդին ու անոր արդար դատին:

Ապա, պատուիրակութիւնը ծաղկեպսակ գետնեց Կանայի գոհերու շիրմներուն: Ամալի անունով խօսք առաւ Ալի Համտան: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց հայ ժողովուրդին եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ցուցաբերած բարոյական անվերապահ զօրակցութեան համար:

#### ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ԱՀՏԱՊ ԱՅՅԵԼԵՑ ԹՐԻՓՈԼԻԻ Հ. Յ. Դ. ԱԿՈՒՄԲ

Երեսփոխան Միսապ Ահտապ երէկ առտու ժամը 10:00ին այցելեց Թրիփոլիի Հ. Յ. Դ. ակումբ, ուր տեսակցութիւն մը ունեցաւ տեղւոյն կոմիտէի ընկերներուն հետ: Քննարկուած են քաղաքական, ընկերային եւ այլ հարցեր, որոնց շարքին՝ պաղեստինեիսրայելեան վերջին իրադարձութիւններուն եւ հարաւային Լիբանանի իրավիճակին կապուած հարցեր:

#### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԱՆԱՅԻ ՄՊԱՆԴԸ Կ'ԱՆՈՒԱՆԷ «ԴԱՐԱՇԻՋԱՆԻ ԶԱՐԴԸ»

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ Կանայի Զարդի տարեգարձին առիթով յիշեցուց, որ Իսրայել ՄԱԿի ուժերու Կանայի կեդրոնատեղին ապաստանած անմեղներուն դէմ գործած է «դարաշրջանի Զարդը»:

Շար.ը՝ էջ 2

#### ՊՈՒՇ ԳՈՂ՝ ԺԵՆԻՆԷՆ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՌԻՇԵՐՈՒ ՊԱՐՊՈՒՄԷՆ

#### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՔԱՇՈՒԵՅԱԲ ԺԵՆԻՆԷՆ, ԻՐ ԵՏԻՆ ՁԳԵԼՈՎ ՄԻԱՅՆ ԱԿԵՐ ՈՒ ԴԻԱԿՆԵՐ

Իսրայելեան ուժերուն հեռացումէն քանի մը ժամ ետք, ժենինի գաղթականի բնակիչները՝ վերապորոզներ գտնելու յոյսով, փնտռութի սկսան փրատակներուն մէջ:

Իսրայել յայտարարած էր, որ մինչեւ Կիրակի օր պիտի հեռանայ Նապլուսէն, ժենինէն եւ Ռամալլայի մէջ մասէն, պաշարուած պահելով պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի նստավայրը եւ Բեթղեհէմի Ս. Մննդեան եկեղեցին, մինչեւ որ լուծուի հոն ապաստանած զինեալներուն հարցը: Պաշտպանութեան նախարար Պենիամին Պըն էլիազար ըսաւ, որ Իսրայելեան ուժերը Արաֆատի կեդրոնատեղիէն ու Բեթղեհէմի եկեղեցիէն պիտի չհեռանան, որովհետեւ երկու շրջաններուն մէջ այլ ահաբեկիչներ կան, որոնք պէտք է բանակին յանձնուին:

Արաֆատ, որ երեք շաբաթ է Վեր արգելափակուած կը մնայ գրասենեակին մէջ, երէկ ընդունեց այցելութիւնները Յորդանանի արտաքին գործոց նախարար Մարուան Մուաշէրի եւ իր անձնական բժիշկին՝ Աշրաֆ Քըրտիի: Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եասէր Ապտ Ռապպո ըսաւ, որ Մուաշէր վերահաստատած է, թէ Ամման պիտի չմասնակցի շրջանային որեւէ խորհրդաժողովի, եթէ Իսրայել չհեռանայ պաղեստինեան բոլոր քաղաքներէն: Իսկ Արաֆատի բժիշկը ըսաւ, որ պաղեստինցի ղեկավարին առողջութիւնը լաւ է: «Ան միայն անքնութենէ կը տառապի», աւելցուց Քըրտի: Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ Գոհունակութիւն յայտնեց իսրայելեան այս քայլին համար եւ ըսաւ, որ Արաֆատ եւս պէտք է սկսի գործնական քայլերու՝ ահաբեկչութեան դէմ քայլեր որդեգրելով:

Շար.ը՝ էջ 3

#### ԱՄԱԼԻ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ ԽՈՒՎՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Ամալ շարժումի եւ Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան անդամ ուսանողներու միջեւ Լիբանանեան համալսարանի իրաւաբանութեան բաժնի Ա. մասնաճիւղէն (Սանայի) ներս նախանցեալ օր պատահած միջադէպը կրկնուեցաւ երէկ, եւ ապահովութեան ուժերը դարձեալ միջամտեցին լուծելու հարցը: «Ուսանողները գործածեցին բիրեր եւ դաշոյններ», ըսին լրատու աղբիւրներ, որոնք աւելցուցին, թէ քանի մը վիրաւոր հիւանդանոց փոխադրուած է:

Ամալ շարժումը հաղորդագրութեամբ մը դատապարտեց միջադէպը, յայտարարելով, որ կապմակերպութիւնը ոչ մէկ կապ ունի Կանոն պատճառած կամ անոնց մասնակցած անձերուն հետ: Հաղորդագրութիւնը բաժանմունքի տնօրէնութենէն պահանջեց կարգապահական խիստ միջոցառումներու դիմել անոնց դէմ:

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան իրապարակած հաղորդագրութիւնը իր կարգին դատապարտեց միջադէպը եւ կոչ ուղղեց բոլոր ուսանողական միութիւններուն՝ լայնախոհութեամբ եւ երկխօսութեամբ լուծելու հարցերը: Հաղորդագրութիւնը պահանջեց կարգապահական քայլեր առնել դէպքը պատճառած անձերուն դէմ եւ համալսարանէն դուրս դնել խոժարարները, պահպանելու համար Լիբանան

Շար.ը՝ էջ 3

#### «ԱՉԴԱԿ»Ի ՀԵՌԱՉԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ԴԱՅԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՅԱՐՈՒԹ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ

#### ԱԼՅՈՐՎԻԼԻ ԵՒ ԿՐԸՆՈՊԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐԸ ԹԻՐԱՆ՝ ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐՈՒ

Շաբաթ 13էն Կիրակի 14 Ապրիլ յուսցող գիշերը, անձանօթներ խափանարարական յարձակում մը կատարած են Ալֆորվիլի մէջ Հայկական Ցեղասպանութեան յուշակոթողին դէմ: Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար դէպքին մասին, «Ալյաթ» հեռուստային հաղորդակցութիւն մը ունեցաւ Ֆրանսայի Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Յարութ Մարտիրոսեանի հետ: Մարտիրոսեան յայտնեց, որ խափանարարները երեք հրձիգ ռումբեր (քոքթէյլ - մոլոթոֆ) նետած են յուշակոթողին վրայ. վնասուած է Հայկական Ցեղասպանութեան մասին յուշակոթողի պատուանդանի վրայի արձանագրութիւնը: Մարտիրոսեան ըսաւ, որ արարքին նպատակը եղած է յատկապէս ջնջել պատուանդանի արձանագրութիւնը: Դէպքը վայրոյթ եւ բողոքի այլք մը բարձրացուցած է ֆրանսահայութեան մօտ, մասնաւոր որ տեղական մամուլը լուր անցած է անոր վրայէն, այն օրերուն, երբ ֆրանսահայութիւնը կը պատրաստուի մեծ շուրջ մը Հայկական Ցեղասպանութեան 87ամեակը: Ֆրանսայի Հայ Դատի Յանձնախումբը յատուկ յայտարարութեամբ մը խստի դատապարտած է արարքը եւ պահանջած է անյապաղ երեւան հանել եւ պատասխանատուութեան կանչել սրբապծումի հեղինակները:



Ալֆորվիլի յուշակոթողի արձանագրութիւնը Նշենք, որ Ալֆորվիլի Հայկական Ցեղասպանութեան յուշակոթողը 1980ականներուն բազմիցս ենթարկուած էր խափանարարական արարքներու:

#### ՀԱՄԱՔԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԴԵՄ՝ «ՔՈՔԹԵՅԼ ՄՈԼՈԹՈՎ»ՆԵՐ

Թրքական հերթական բարբարոսական արարքի մասին է վերի սինակներով տրուած լրատուութիւնը:

Արեւմտահայաստանի մէջ յուշակոթողներու եւ եկեղեցական կառոյցներու ոմբահարումը, այլ խօսքով մշակութային ջարդը, բնականաբար կը նպատակադրէր ջնջել հայապատկան եւ հայադրոյ մը բոլոր փաստերն ու հետքերը:

Այժմ թիրախ են Հայկական Ցեղասպանութեան յուշակոթողները: Երկու շաբաթ առաջ Ֆրանսայի ԿրԸՆԱՊԻ քաղաքի Ցեղասպանութեան յուշակոթողին վրայ սեւ ձեռքեր փորձած էին ջնջել յուշակոթողին արձանագրութիւնները: Իսկ Շաբաթէն Կիրակի յուսցող գիշերուն ընթացքին, մոլոթին մէջ խափանարարութիւն գործուած է Ալֆորվիլ քաղաքի «Աշտարակ» հրապարակին վրայ կանգնած Հայկական Ցեղասպանութեան յուշակոթողին դէմ: Ստահակներ «քոքթէյլ մոլոթով»ներ նետած են Մեծ Եղեռնի զոհերուն յիշատակին նուիրուած յուշակոթողին վրայ:

Ապրիլի այս օրերուն ո՞վ է ինչո՞ւ կը նախաձեռնէ նման սրբապղծումներու:

Հայկական Ցեղասպանութեան ճանաչման փաստացի օրինակները ջրագրի դարձուցած են թրքական շրջանակները: Հակադէմոստրիաները կ'ըլլան բարբարոսային եւ ամէնէն փողոցային ձեւով: «Քոքթէյլ մոլոթով»ները չեն կրնար ստուեր ձգել հայրենեան ազգային-հաւաքական յիշողութեան այլ մասնաւոր անոր պահանջատիրական ոգիին վրայ: Հակառակ պետական ահաբեկչութեան, Արեւմտահայաստանի մէջ հայապատկան ամէն դրոյմ ջնջելու քաղաքականութեան, պատմական արխիւներու զոհումին, պետական մակարդակի վրայ կատարուող պանապան ճնշմիջոցներուն եւ Հայկական Ցեղասպանութեան զոհերու յիշատակին կառուցուած կոթողներուն վրայ նետուած «քոքթէյլ մոլոթով»ներուն, հաստատ քայլերով պիտի շարունակուի Հայկական Ցեղասպանութեան ճանաչման յարթարշաւը:

«Ա...»

# ԵՂԵՌՆԻ 87ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

## Կազմակերպութեամբ՝

### ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002ի երեկոյեան ժամը 9:00ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի Եղեռնի մատրան դիմաց:

### ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՏ ԿԸ ԽԱՐԱԶԱՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երկն ղիտել տուալ, որ շրջանային եւ միջազգային պարգազումներուն հետեւող պետական պատասխանատուները պէտք չէ անտեսեն երկրին ներքին վիճակը, մասնաւոր պետական վարչութիւններու գործունէութիւնը, որ անմիջական շփումի մէջ է քաղաքայիններուն եւ անոնց կարիքներուն հետ:

Անհրաժեշտ է, որ պետական վարչամեքենային վերահսկող մարմինները տէր կանգնին իրենց պարտականութեանց եւ սանձն օրինապահութիւնները, պատժեն յանցագործները, որպէսզի անբարեխառն օրէնքի եւ հաստատութեան պետական նկատմամբ քաղաքացիի հաւատքը, ըսաւ նախագահ Լախուտ:

Ան նկատել տուաւ, որ պետական հաստատութիւններու գործունէութիւնը նախանշ արձանագրած է եւ վերականգնել քաղաքացիներու գանգատները կարգ մը պաշտօնեաներու անընդունելի ընթացքին, ուստի պէտք է դիմել խիստ միջոցառումներու եւ վերջ դնելու վարչամեքենային հսկող մարմիններու աշխատանքին միջամտութիւններուն:

Ոչ մէկ պետական պաշտօնատար կամ պաշտօնեայ օրէնքէն բարձր է, ինչ ալ ըլլայ անոր աստիճանը կամ դիրքը, որովհետեւ անոր հեղինակութիւնն ու իշխանութիւնը շնորհած է այդ օրէնքը, ըսաւ ան, ընդգծելով, որ պետական վարչամեքենան մնայուն եւ ո՛չ պարբերական հսկողութեան տակ պէտք է ըլլայ, որովհետեւ օրէնքի գործողութեան մէջ որեւէ նախանշ պատճառ պիտի դառնայ տարիներ տեւած վարչամեքենայի սանձարձակութեան, որ թոյլատրելի չէ տնտեսական այս դժուար պայմաններուն մէջ:

Նախագահ Լախուտ նաեւ ընդգծեց, որ անհրաժեշտ է գործադրել նախարարաց խորհուրդի այն որոշումը, որ կը թելադրէ երեք ամիսէն տեղեկագիր ներկայացնել վերջերս նշանակուած պետական պաշտօնեաներու գործունէութեան մասին, որովհետեւ այդ պայմանաձեւը արդէն անցած է:

Նախագահ Լախուտ կը խօսէր պետական վարչամեքենայի հարցերու կեդրոնական քննիչ մարմինի նախագահ Ֆուատ Հայտամուրի հետ հանդիպումին ընթացքին, որուն ներկայ գտնուեցան նոր նշանակուած ընդհանուր քննիչները:

## ՄԱՀԱԶԴ

**Տիկին Մակի Կարպուշեան** եւ զաւակները՝ Ժողէֆ, Մարայ եւ Բաֆֆի  
**Տիկին Եսթեր Կարպուշեան**  
**Տէր եւ տիկին Կարպիս Կարպուշեան** եւ զաւակունք  
**Տէր եւ տիկին Ջարեհ Կարպուշեան** եւ զաւակունք  
**Տիկին Արփինէ Կարպուշեան** եւ զաւակունք  
**Տէր եւ տիկին Ճորճ Լնդեան** եւ զաւակունք  
**Տէր եւ տիկին Արթուր Մահչիկեան**  
**Տիար Ստեփան Թիթիգեան** եւ զաւակունք  
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր, քեռիին եւ հարազատին՝

### ԱՐԱՄ ԺՈՋԷՖ ԿԱՐՊՈՒՇԵԱՆԻ (Ծնեալ՝ Ըսեապ, 1934ին)

Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 17 Ապրիլ 2002ին, Աւստրալիոյ մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 22 Ապրիլ 2002ին, Միտնիի Հայոց եկեղեցւոյ մէջ, Աւստրալիա, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Միտնիի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապո:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Կարպիս Կարպուշեանի բնակարանը, Պուրճ Համուտ, Սինէ Մատոնայի թաղ, Կարպուշեան շէնք, Երկուշաբթի 22 եւ Երեքշաբթի 23 Ապրիլին:

## ՄԱՀԱԶԴ

**Տիար Առաքել Նաչատուրեան** եւ զուսորը՝ Սօսի  
**Տէր եւ տիկին Թորոս Նաչատուրեան** եւ զաւակունք  
**Տէր եւ տիկին Օլէկ Նաչատուրեան** եւ զաւակունք  
**Նաչատուրեան ընտանիք**  
**Մարտիրոսեան ընտանիք**  
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր եւ հարազատին՝

### ՄԱՐԻ ԽԱԶՏՈՒՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ)

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 14 Ապրիլ 2002ին, Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 17 Ապրիլ 2002ին, կէսօրէ առաջ ժամը 10:00ին, Չալքայի Հայ Կաթողիկէ Ս. Նաչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Այնճարի գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապո:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին եկեղեցւոյ սրահը եւ հանգուցեալին բնակարանը, Մայրապէ «Մար Էլիաս» փողոց, «Սուիէլլ Հաննա» շէնք Հինգշաբթի 18 եւ Ուրբաթ 19 Ապրիլին, եւ հանգուցեալին զաւակին՝ Օլէկ Նաչատուրեանի բնակարանը, Չալքա «Էլ Չղպի» փողոց, «Ռուբոյ պու խալիլ» շէնք, Շաբաթ 20 Ապրիլին:

### ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՈՒՂՂԱԾ ԻՐ ԽՕՍՔԻՆ ՄԵՋ

## «ԴՈՒՔ ԻԲՐԵՒ ԸԱՅԵՐ ԿՈՐՍՈՒԱԾ ԷՔ՝ ԱՌԱՆՅ ԸԱՅ ԴՊՐՈՅԻՆ ԵՒ ԸԱՅ ԼԵՂՈՒԻՆ»

ԸՍԱԻ ԺԱԳ Ս. ՅԱԿՈՒԲԵԱՆ

«Ո՛վ Հայ, խօսէ հայերէն չէկ զարթօնքդ մինչեւ քուն. Բազմութեան մէջ թէ միմակ, տան թէ ծամբուն շուկայի, Օտարին հետ ու եղբորդ, իբրեւ յաղթերգ պանծալի՝ Հպարտութեամբ, բարձրածայն լոյկ հայերէն խօսէ դուն»:

ԺԱԳ Ս. ՅԱԿՈՒԲԵԱՆ

Սփիւռքահայ մեծ բանաստեղծ Ժագ Ս. Յակոբեանի իւրաքանչիւր հայու ուղղուած այս պատգամին իբրեւ կենդանի մարմնացում, երէկ, Չորեքշաբթի 18 Ապրիլին, Ազգային եղիչէ Մանուկեան երկրորդական վարժարանի Սիրան Մանուկեան սրահին մէջ ազգային վարժարաններէն մեծ թիւով աշակերտներ հաւաքուած էին՝ անոր ոտանաւորները արտասանած, սակայն անձամբ չտեսած բանաստեղծի ճանչնալու, անոր խօսքը լսելու եւ իրենց հայերէնով արտասանած բանաստեղծութիւններն ու երգերը բանաստեղծին ակունքին լսելի գարձնելու համար:



Առաջնորդ սրբազանը բանաստեղծին շնորհեց գնահատագիր մը

Լուսանկարը՝ ՍԹԻՏՏՕ ԱՇԼԱԿԻ

Հիրէ եւ 1934ին աւարտած է Պէրպէրեան քոլէճը: Երեք տարի ետք, վկայուած է ֆրանսական ինտերնֆիլ թոլէճէն, ապա Գահրիբի պետական համալսարանի դեղագործական բաժինէն: 1949ին կնոջ հետ գաղթած է Աւստրալիա, ապա Գահրիբ, ուր ստանձնած է հօր դեղարանի տնօրէնի պաշտօնը, միաժամանակ կրօնագիտութիւն դասաւանդելով: 1956ին ընտանիքով հաստատուած է Պէյրութ, ուր մասնագիտական իր գրադուսններուն աւելցնելով, ուժ տարի հայերէն լեզու եւ գրականութիւն դասաւանդած է Կենաց երկրորդական վարժարանին մէջ: 1965ին կրկին փոխադրուած է Մելբուրն, իսկ երկու տարի ետք՝ Միացեալ Նահանգներ: 1943ին լոյս կ'ընծայէ «Գաղտնի ծամբան» քերթողագիրքը, ապա «Մեղրալուսին»ը: Ասոնցմէ ետք ան կը հրատարակէ այլ ստեղծագործական հատորներ, որոնց մէջ կ'երգէ հայրենիքի եւ Քրիստոսի սէրը: Բանաստեղծութիւններ կը նուիրէ Հայաստանին ու հայ ժողովուրդին, հայոց լեզւին ու բառին, հայ դպրոցին ու դպրութեան: Ան անսահման ցաւով կ'անդրադառնայ

օտար երկիրներու տակ թափառող պանդուխտ ու թշուառ տարագիր հայութեան: Անոր բանաստեղծութիւններուն մէջ միշտ տիրապետող եղած է սէրը, համաժողովային ու անսահման սէրը: Բացման խօսքէն ետք Ազգային եղիչէ Մանուկեան երկրորդական վարժարանէն Լիւսի Դաւիթեան անգլերէնով «Բարի Գալուստ» մաղթեց բանաստեղծին: Ապա նոյն վարժարանէն շնորհակալութեամբ վրայ նուագով հանդէս եկան Հայկ Փափագեան եւ Ռոզալին Կիզիլպէյօլիքեան, որմէ ետք Հուրի Եղբորտեան արտասանեց Ժագ Ս. Յակոբեանի «Մեք»ը, որուն յաջորդեց մեներգ մը՝ Սեւան Հապիպեանի կողմէ: Սուրէն Նանամիրեան Ազգային վարժարանէն Ալին Գրիբեան աստուծոյ քանդակը, իսկ նոյն դպրոցէն Տաթևիկ Արթիսեան ղաշակի վրայ նուագեց: Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային թոլէճէն Անուշ Գերպապեան, Թալին Ալըզեան, Դալար Գրիբեան եւ Լուսին Օհանեան արտասանեցին Ժագ Ս. Յակոբեանի «Մեք Կ'երթանք»ը: Ապա Թամար Իսկէնեան շուրճի նուագեց «Հաւուն - հաւուն»ը եւ «Հովիւի կանչը»՝ ան նաեւ երգեց Ժագ Ս. Յակոբեանի «Կոունկ»ը: Ազգային Արարեան վարժարանէն խումբ մը աշակերտներ մեկնարանեցին Ժագ Ս. Յակոբեանի «Յաղթերգ»ը: Այս կողմից եւ տպաւորիչ գեղարուեստական յայտագիրէն ետք խօսքը տրուեցաւ Ժագ Ս. Յակոբեանի՝ «Կեանքիս ամենէն երջանիկ պահէն» մէջ կը կ'ապրիմ ես այս պահուն եւ դժուար է բաներով նկարագրել այն ուրախութիւնը, այն զգացումները, որոնք պատած են հիմա իմ սիրտս: Ըսի անգամ մը հրապարակաւ, թէ ինքզինքս կը նկատեմ երջանիկ հայ բանաստեղծ մը, այսօր հաստատուեցաւ:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Իրենց ամուսնոյն եւ հոր՝ Գեորգ Սահակեանի մահուան առիթով, տիկին Շարմիճ Սահակեան եւ զաւակունք 100 \$՝ ԼՕԽի «Հայաչէն» մասնաձեռնից:

### ԿՈՒՉՈՒԻ

● Argenterie Mano Չալքայի մասնաձեռնից համար կարիքը ունի վաճառող օրիորդի մը: Ըեռ. 01-888008 եւ 01-885168:

### ԿՈՒՉՈՒԻՆ

● Փորձառու աղաման-դաշարներ: Դիմել՝ հեռ. 03-700804:

### ԿՈՒՉՈՒԻ

● ԱՅՆԵԱՆ ԸԱՍՏ. կարիքը ունի հաշուապահուհի մը, նուագագոյն 5 տարուան փորձառութեամբ: Ըեռ. 01-255222: Ծար.՝ էջ 9

### ՊՈՒՐՃ ԸԱՍՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԼԵՒՆ ԵՒ ՍՈՑԻԱԼ ՅԱԿՈՒԲԵԱՆ ԱԶԳ. ԲՈՒԷՃ

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՀԱՅՎԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ - ՎԱՃԱՌՔ

Հովանաւորութեամբ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Նախագահութեամբ՝ ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՇ ՅՈՎԱՆՆԵԱՆԻ Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար

Ցուցահանդէսի բացումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 22 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 7:30ին, դպրոցի սրահին մէջ:

● Ցուցահանդէսը բաց է Երեքշաբթի, 23 Ապրիլէն Շաբաթ 27 Ապրիլ 2002, ամէն օր, առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 8:00:

ՇՐԱԻՐ

### ՀԸՉՊԱՆԼԱ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆՏՐԱՆՔ ՄԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ԻՍՐԱՅԷԼԻ

Քաթարեան «Ուաթան» օրաթերթը երէկ լոյս տեսած իր համարին մէջ հաղորդեց, որ Հրկայալա Միջազգային կարմիր խաչի ճամբով Իսրայէլի փոխանցած է առաջարկ մը, ըստ որուն՝ իրեն մօտ Գործնական կոմիտէի պիտի տրուէր ներառաւոր գերի իսրայէլացի պիտուորները, ներառաւոր գերի իսրայէլացի պիտուորները, ներառաւոր գերի իսրայէլացի պիտուորները եւ Այրարկուած պաշտօնակիրները երեսփոխան եւ Այրարկուած պաշտօնակիրները պատասխանատու Մարուն Պարոնի կ'ըլլէր անոր ձեռքարկուած պաշտօնակիրները:

### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԱՆԱՅԻ... Ծարուակուած Ա. ԷջԸ

որուն տարբերակը կը կրկնէ այսօր Արիէլ Ծարուն պաշտօնին ներքին շրջաններուն մէջ: «Պատերազմի ոճրագործ Ծարունը խաղաղասէր անուանողներուն հարց կու տանք, որ խաղաղասիրութիւնն է ՄԱԿի դրօշին տակ գտնուողներու դէմ գործուած վարդը, կամ արգիլեալ զէնքերով ժենիին պէս զաղթական մը կործանումը, կամ Աքսա պաշտօնակիրն է Ս. Մանուկեան եկեղեցիին սրբապօղոծումը, ըսաւ նախարար Յովնանեան: Ան աշխարհի պատերազմութեան եւ խաղաղասէր ուժերուն կողմէն իր անձեռն Պաշտօնին մէջ Իսրայէլի գործած ահաբեկչութիւնը, հաւատեալով, որ իրաւատէր պաղեստինցիին, լիբանանցիին նման յաղթական դուրս պիտի դայ:

**ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ - ՇՐՉԱՊՏՈՅՏՆԵՐ**  
● 21 24 Ապրիլ Հայկ, Տեր 2օր, Մարկանտ 80 եւ 130Յ  
● Հայաստան համահայկական Բ. ժողով 24 31 Մայիս 475Տ  
● 29 30 Յուլիս Հայաստան, Սեւան, Արգի 21 օր պտոյտ-Յոթով, վիզա, տոքթ, օդանայի տոմս 399, 455, 555, 780Տ  
● Ապրիլ 22Յ սկսեալ ամէն առտու եւ իրիկուն Յեր Գրասենակի առջեւ ղեպի Հայկ, Դամասկոս, Լաքաթա, Յոր օրըպրիւրով, փայտ 8\$, օտուտ՝ T. V./ Tel./ W. C.  
ԱՅՆԵԱՆ Թուրք 01/261177 03 233978

### Հ. Յ. Դ. ԼԵՄ ԱՊՐԻԼԵԱՆ ՁԵՆԱՐԿՆԵՐ

● ԹՐԻԲՈՒԼԻ  
Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. ԼԵՄի «Կարո Սաունի» կորիզին: Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 7:00ին, Ազգ. Խրիմեան - Նուպարեան վարժարանի սրահին մէջ:  
Բանախօս՝ ԸՆԿ. ԸՐԱՉ ՎԱՐՉԱՊԵՏԵԱՆ

● ԱՅՆՃԱՐ  
Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. ԼԵՄի «Ճաւարչ Միաքեան» մասնաձեռնից: Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 8:00ին, «Ետուիկ» սրահին մէջ:  
Բանախօս՝ ԸՆԿ. ԸՐԻՍՏ ԼԻՊԱՐԵԱՆ

● ՉԱՀԼԷ  
Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. ԼԵՄի «Համազասպ» կորիզին: Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 5:00ին, Ժալալայի ակումբի սրահին մէջ:  
Բանախօս՝ ԸՆԿ. ԽԱՄԱԿ ԱՅՆԹԱՊԵՏԵԱՆ

● ՃԻՊԷՅԼ  
Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. ԼԵՄի «Արարատ» կորիզին: Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 6:00ին, «Թռչնոց Բոյն»ի սրահին մէջ:  
Բանախօս՝ ԸՆԿ. ԶԱՆԹ ԱԲԵՏԻՍԵԱՆ

● ՈՒՆՈՒՏԱ  
Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. ԼԵՄի «Ուաթի» մասնաձեռնից: Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 7:30ին, Ուաթայի դաշտին մէջ:  
Բանախօս՝ ԸՆԿ. ՅԱԿՈՒ ԱՅՆԹԱՊԵՏԵԱՆ

Հ. Յ. Դ. ԼԵՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԳՐԱՆԵՆԵԱԿ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը կը յայտարարէ, որ կազմակերպած է քննութիւն - քննարկ մը Բ. կարգի քննիչներու համար:

- Թեկնածուները պիտը լրացնեն հետեւեալ պայմանները:
  - Լիբանանցի՝ աւելի քան տասը տարիէ ի վեր:
  - Դիմումի ներկայացման ատեն 28 տարիքը անցած պէտք չէ ըլլայ, եւ հասակը՝ առնուազմ 168 սմ.:
  - Իր քաղաքացիական իրաւունքներէն չէ զրկուած, մէկ ամիսէն աւելի բանտարկութեան պատիժ չէ ստացած եւ քրեական յանցանքի համար չէ դատաւարարուած:
  - Ունի թեմի Բ. պաշտօնաւոր, էլեթրոնիկ կամ համակարգիչներու ծրագրումի մասնագիտութիւն:
  - Կատարած է պարզ գիմնորակած ծառայութիւնը տեղակայուելու 12րդ, 13րդ կամ 14րդ խմբակին, երեսփոխաններու 25րդ, 26րդ, 27րդ խմբակին, կամ գիմնորակներու 54րդ, 55րդ եւ կամ 56րդ խմբակին հետ:
  - Դիմումները պիտը լրացնուին ամառը, 7էն 29 Մայիս 2002, Ընդհանուր Ապահովութեան Ուժերու գլխաւոր կեդրոնատեղի, Պէյրութի Արդարութեան պալատին դիմաց:
  - Յանդիկալ մանրամասնութիւններու համար դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենակ, «Ճաղոյեան» կեդրոն, Բ. յարկ:

### ՕԹԱՆԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԻՈՅ ՅԵՏ ՅԱՏՈՒԿ ՎԵՐԱԺՈՂՈՎ ՍԸ ԿԱՅԱՑՆԵԼ

ՊՐԻԻՔՍԵԼ, 18 (ՌՈՅԹԸՐԸ)։- ՕԹԱՆ Հինգ-  
շաբթի օր ընդունած է Ռուսիոյ հետ յատուկ վե-  
հաժողով մը կայացնել յառաջիկայ ամիս, Հոռ-  
մի մէջ, նախկին Պաղ Պատերազմի թշնամիներ  
ուն միջեւ մեղքի սեղանը գործակցութեան նպա-  
տակով միացնել խորհուրդ մը ընթացքի մէջ  
դնելու համար, յայտնած է Կինակցութեան մէկ  
պաշտօնատարը։

Ան ըսած է, թէ Մայիս 28ին (երբ Մ. Նահանգ-  
ներու նախագահ Ճորճ Պուշ Երոսպա պիտի  
գտնուի) կայանալիք վեհաժողովին նախա-  
պայմանը համաձայնութեան մը գոյացումն է  
ՕԹԱՆի 19 անդամ երկիրներուն եւ Ռուսիոյ  
արտաքին գործոց նախարարներուն միջեւ՝ նոր  
խորհուրդին վերաբերեալ մանրամասնութիւն-  
ներուն շուրջ։ Անոնք իրենց ժողովը պիտի գու-  
մարեն Մայիս 14էն 15, Ռեյքյալիքի մէջ։

Նոր ստեղծուելիք մարմինին մէջ Ռուսիա  
հաւասար գործակից մը պիտի ըլլայ ՕԹԱՆի  
անդամներուն՝ ապահովութեան վերաբերեալ  
կարգ մը հարցերու գծով որոշումներու կայաց-  
ման համար։

Ռուսիայի անդամներ կ'ըսեն, թէ խորհուրդը շատ  
քաջալերական պիտի ըլլայ Փուլինի համար,  
որ կ'ուզէ ցոյց տալ իր կառավարութեան եւ Կին-  
եալ ուժերուն մէջ թերահաւատներուն, որ իր  
արեւմտամետ քաղաքականութեան փոխարէն  
բան մը ձեռք կը ձգէ։

### ԻՐԱՔԻ ԶԱՌԱՋԻԿԱՅ ԵՐԿՈՒ ՕՐԵՐՈՒՆ ՊԻՏԻ ՈՐՈՇԷՒՄ ԱՎԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՆՈՐ ԹՈՒԱԿԱՆ ՍԸ

Իրաք յայտնեց, որ յառաջիկայ երկու օրերուն ըն-  
թացքին պիտի որոշուի ՄԱԿի հետ բանակցու-  
թեանց երկրորդ փուլի մը թուականը։ Արտաքին-  
գործոց նախարար Նաժի Սապրի ըսաւ, որ ՄԱԿի  
ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ կայա-  
հաստատուած է խորհրդակցելու համար թուակա-  
նի մը մասին, որ շուտով պիտի յայտարարուի։

Խօսելով ամերիկեան ազդեցութեան մասին,  
Սապրի ըսաւ, որ Անանի հետ նախորդ հաւաքու-  
մին բանակցութիւններու ընդհանուր շրջագիծ մը  
հաստատուած է, որ կը բնի ՄԱԿի ուխտէն եւ որո-  
շումներէն։

ՄԱԿի վէճի քննիչներուն վերադարձի գծով  
Անան - Սապրի բանակցութիւններու երկրորդ փու-  
լը տեղի պիտի ունենար երկի եւ այսօր։ Սակայն  
Իրաք անցեալ Ուրբաթ օր յայտարարեց, որ բանակ-  
ցութիւնները կ'առկային, որովհետեւ այս հանգր-  
ւանին կ'ուզէ շեշտուր դնել Միջին Արեւելի տա-  
նապին ու անոր յուծում ապահովելու միջոցներուն  
վրայ։ Անան - Սապրի առաջին հանդիպումը տեղի  
ունեցած էր Մարտ 7ին։

Միւս կողմէ, Անան յոյս յայտնեց, որ Իրաք -  
Քուէյթ կապերու ջերմացումը պատճառ պիտի դառ-  
նայ, որ ՎՍՄ օրէն Պաղտատ սկսի տեղեկութիւն  
տալ Օճի պատերազմին ի վեր կրսուած նկատ-  
ած վեց հարիւր թուէյթիներու եւ օտարներու  
մասին։ Իրաք միշտ այ յայտարարած է, որ բան-  
տարկեալներ չունի։ Սակայն անցեալ շաբաթ,  
բարձրատիման պաշտօնատար մը ըսաւ, որ Պաղ-  
տատ պատերազմի գործակցելու Քուէյթի հետ՝ լու-  
սաբանելու համար կրսուած նկատուածներուն  
հարցը։

● ԱՒԵԼԻ քան հարիւր երոսպացիներ երկէ ցոյցի  
մը մասնակցեցան Պաղտատի մէջ, բողոքելու հա-  
մար ամերիկեան հաւանական յարձակումի մը դէմ։  
Յուցարարներուն կարգին էին Երոսպական  
խորհրդարանի անդամներ եւ երոսպացի այլ երես-  
փոխաններ։ Անոնք պահանջեցին նաեւ վերջ տալ  
Իրաքի դէմ հաստատուած պատմամիջոցներուն։

(ՌՈՅԹԸՐԸ)

Հ.Բ.Ը.Ս. - Հ.Ե.Ը. «ԱՆՊԱՆԵԿ» ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԱՐՄԻՆ

### ԱՊՐԻԼԵԱՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Հ. Հ. Գ. Ա. Ա. ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ՝

### ՓՐՈՑ. ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Կը երկայացնէ՝

ԶՐՈՅՑ : ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԲ ՍԸ

Ա.- Հանդիպում - գրոյց լիբանանահայ  
երիտասարդներուն հետ։  
Ուրբաթ, 19 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 8:00ին,  
Հ.Բ.Ը.Ս. Տեմիրճեան կեդրոն՝ Ասպետներու Յարկ։

Բ.- Երապարակային դասախօսութիւն։  
«Ազգային ինքնորոշման իրաւունքը եւ  
տարածաշրջանային հակամարտութիւնները  
(Անդրկովկաս - Միջին Արեւելք)»  
Երկուշաբթի, 22 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը  
8:30ին, Հ.Բ.Ը.Ս. Տեմիրճեան կեդրոն՝ Բ. յարկ։

Գ.- Դասախօսութիւն AUB Ամերիկեան  
համալսարանին մէջ (Isam Fares Hall):  
The Regional Conflicts and the Right of National  
Self Determination  
Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002, կէսօրէ ետք ժամը  
2:00ին։

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԲԱՇՈՒԵՅԱԻ ...

Շարունակուած Ա. ԷջԸ

Միւս կողմէ, իսրայէլ-  
եան ուժերը Չորեք-  
շաբթիէն Հինգշաբթի  
լուսցող գիշերուան ըն-  
թացքին պարպեցին Ժե-  
նիւնը, սակայն քաղաքին  
մոտեքին գտնուող բլու-  
րի մը վրայ ներկայու-  
թիւն մնացին արձակա-  
զէնները, յայտնեցին  
սկանտեսները։ Իսրա-  
յէլեան բանակը ոչինչ  
յայտարարեց Ժենիւնի  
պարպումին մասին։

Գաղթականային բնա-  
կիչները իրենց ձեռքերով  
սկսան վերցնել քան-  
դուած բնակարաններուն  
քարերը, յուսալով, որ  
ողջ հարազատներ պիտի  
գտնեն։ Ժենիւնի գաղթա-  
կայանին մէջ տեղի ունե-  
ցած էին ամէնէն արիւ-  
նիւնի մէջ ինկած զոհե-  
րուն թիւը տակաւին  
յստակ չէ։ Պաղտատինցի-  
ներ կ'ըսեն, որ քանի մը  
հարիւր հոգի ջարդուած  
է գաղթականային մէջ։

Իսրայէլ կ'ըսէ, որ միայն  
75 զինեալ սպաննած է։  
Ժենիւնի բնակիչները  
ամէն օր դիակներ կը  
գտնեն փողոցներու ու  
փլատակներու մէջ։ Պաղ-  
տատարներ կ'անկա-  
լեն, որ զոհերուն թիւը  
օրըստօրէ քաճարանայ։  
Հիւսնոզանոցային աղ-  
բիւրներ հերքեցին երէկ  
չըջան ըրած տարածա-  
յին ընտանիքին երեսին  
ուժերին մը, ըստ որուն  
հինգ հոգի ողջ գտնուած  
է փլատակներու մէջ։

Արաբական երկիրներ  
ու մարդասիրական  
օժանդակութիւններու  
միջնորդային կազմակեր-  
պութիւններ կը պահան-  
ջեն հետաքննութիւն մը  
բանալ՝ ստուգելու հա-  
մար Ժենիւնի մէջ պատ-  
ած իրակայնութիւնը։  
Բարեսիրական ու մար-  
դասիրական շարժումներ  
կը պահանջեն նաեւ, որ  
Ժենիւնի ղռները բաց-  
ուին, որպէսզի կարելի  
ըլլայ օգնել մօտաւորա-  
պէս 13 հազար պաղես-  
տինցիներու, որոնցմէ  
շատերուն բնակարանե-  
րը քանդուած են։

ՄԱԿի մէջ արաբական  
երկիրները կը փորձեն  
Ապահովութեան Խոր-  
հուրդին կողմէ ընդունե-  
լի դարձնել բանաձեւ մը,  
որ կը պահանջէ իսրայէլ-  
եան ուժերուն հեռա-  
ցումն ու Ժենիւնի մէջ մի-  
ջազգային հետաքննու-  
թիւն մը։ Սակայն, Ուա-  
շինկթըն կը մերժէ մէկ  
ամսուան մէջ Միջին  
Արեւելքի տագնապին  
մասին շորորդ բանաձեւ  
մը, զիտեղ տալով, որ  
անիկա յաւելեալ կերպով

կրնայ սրել լարուածու-  
թիւնը։ Ամերիկացի  
պաշտօնատարներ նախա-  
տեսեցին, որ Ուաշինկթըն  
վերջին ենթարկէ բանա-  
ձեւը, եթէ քուէյթիւն-  
թեան դրուի Ապահովու-  
թեան Խորհուրդի նիստին։

ՄԱԿի մէջ պաղեստին-  
ցի դէտ Նասէր Քիտուա  
ըսաւ, որ արաբական եր-  
կիրները սպասեցին մին-  
չեւ որ Միացեալ Նա-  
հանգներու արտաքին  
գործոց նախարար Քոլին  
Փաուըլ աւարտէ առաքե-  
լուութիւնը։ Սակայն իսրա-  
յէլ Փաուըլի պահանջին ալ  
չենթարկուեցաւ, որուն  
պատճառով բանաձեւին  
առաջարկը ներկայացուե-  
ցաւ, աւելցուց Քիտուա։

Արաբական Լիկայի  
ընդհանուր քարտուղար  
Ամր Մուսա իսրայէլը  
կ'ամբաստանէ քաղաքա-  
յիններ ջարդելու եւ պա-  
ղեստինցիներուն դէմ  
պատերազմի ոճիւրդով  
գործելու յանցանքով։  
Մուսա ըսաւ, որ իսրայէլ  
ինքզինք միջազգային  
օրէնքէն վեր կը դասէ եւ  
պիտի շարունակէ  
բռնարարները այնքան  
ատեն, որ կը վայելէ Միաց-  
եալ Նահանգներուն  
պաշտպանութիւնը։ Իս-  
րայէլի վայելած քաղաքա-  
կան պաշտպանութիւնը  
պատակ մըն է միջազգա-  
յին ընտանիքին երեսին  
ուժերուն մը, աւելցուց Մու-  
սա, զիտեղ տալով որ գաղ-  
թականներուն մէջ պա-  
ղեստինցիներուն սպա-  
նութիւնը համազօր է «ցե-  
ղասպանութեան»։

Բրիտանիա եւս կոչ  
ուղղեց իսրայէլի՝ ընդու-  
նելու Ժենիւնի միջնորդային  
բանաձեւին միջնորդային  
հետաքննութիւն մը։ Ար-  
տաքին գործոց նախա-  
րար Ճէք Մթօր ըսաւ, թէ  
փաստեր կան, որոնք  
յնչեւս բանակը ծայրա-  
յեղ ու չափազանցուած  
ուժի գործածութեան դի-  
մած է Ժենիւնի բնակիչնե-  
րուն դէմ։ Իսրայէլ պա-  
տասխաններ ունի տալիք  
հետեւաբար, լաւ է որ ըն-  
դունի միջազգային հե-  
տաքննութիւն մը, ըսաւ  
Մթօր։

Արաբական օրաթեր-  
թերը երէկուան իրենց  
թիւերուն մէջ լայն տեղ  
չըջապտոյտին աւարտին  
եւ զայն ձախողած նկա-  
տեցին։ Արաբական մա-  
մուլին կատարած գնա-  
հատումին համաձայն,  
Փաուըլի շրջապտոյտը  
փաստած է, թէ Ուա-  
շինկթընի կշիռը տկարա-  
ցած է շրջանին մէջ, ուր  
տիրող ուժը իսրայէլն է։  
Լիբանանեան «Սա-  
ֆիր» օրաթերթը կը  
գրէր, որ Փաուըլ Միջին  
Արեւելք հասած էր, իբ-  
րեւ ամերիկացի նախա-  
րար եւ նախկին զօրա-  
վար, շրջանէն հեռա-  
լու համար, իբրեւ իսրա-  
յէլացի զօրավարին՝ Ա-  
րիէլ Շարոնի մէկ հետե-  
ւակ զինուորը։

Արաբ մեկնարաններ  
դիտել տուին, որ Փաուը-  
լի շրջապտոյտի առաջին  
կայանէն յստակ էր, որ  
արաբները չեն ուղղուներ  
անոր ներկայութիւնը։  
Անոնք կ'անկարկէին  
Մարտի Մոհամէտ Զ-  
թապալուրին սառն ըն-  
դունելութեան։ Փաուըլի  
վերջին կայանն ալ դրա-  
ման չնկատուեցաւ, երբ  
Եգիպտոսի նախագահ  
Հիւսնի Մուպարաք տե-  
սակցութիւն չունեցաւ  
նախարարին հետ։

Իսրայեան օրաթերթ մը  
կը գրէր, որ Փաուըլի  
առաքելութեան նպա-  
տակն էր կանաչ լոյս տալ  
իսրայէլեան բանակին՝  
շարունակելու բռնա-  
րարները պաղեստին-  
եան շրջաններուն մէջ։  
(ՌՈՅԹԸՐԸ)

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում Հայաստանի Հանրապետու-  
թեան դեսպանութիւնը տեղեկացնում է, որ  
ս.թ. Մայիսի 27ից 28ը Երեւանում անցկաց-  
ւելիք Հայաստան – Սփիւռք երկրորդ  
խորհրդատողովին մասնակցելու դիմում-  
նագրերի ներկայացման վերջին ժամկետը  
Ապրիլի 30ն է։  
Յիշեցնում ենք, որ խորհրդատողովին  
մասնակցութիւնը ապատ է։  
Դիմումագրերի ներկայացման, ինչպէս  
նաեւ տեղեկութիւնների համար կարող էք  
դիմել դեսպանութիւնի հետեւեալ հեռախո-  
սահամարներով (04) 418860, 402952։  
Լրացուցիչ տեղեկութիւններ կարելի է  
ստանալ նաեւ [www.armeniadiaspora.com](http://www.armeniadiaspora.com) ին-  
տերնետային հասցեով։

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍԱՊԱՆՈՒԹԻՒՆ

19-26 ԱՊՐԻԼ 2002

# ԵՐԿԻՐ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի  
պաշտօնաթերթ «Երկիր»ի վաղուան թիւին երկ-  
րորդ էջով լոյս տեսած «Դաշնակցութիւնը կեդ-  
րոնում է» յօդուածով, Հայաստանի Ազգային  
Ժողովի Հ. Յ. Դ. խմբակցութեան ներկայացու-  
ցիչ Աղուն Կարապետան կ'անդրադառնայ Հ. Յ.  
Դաշնակցութեան ընկերակցական գաղափարա-  
խօսութեան եւ այդ ճամբով արդարութեան  
ձգտելու երեւոյթին, շեշտելով, որ այդ միջոցով  
է միայն, որ կարելի է միասնակցօրէն լուծել  
հայ ժողովուրդի ազգային պետական խնդիրնե-  
րը։

4րդ էջով «Երկիր» կ'արձարձէ հարցեր, որոնք  
կը վերաբերին պատգամաւորական ընտրութիւն-  
ներու քափանցիկութեան եւ արդարութեան։ Այս  
առնչութեամբ թերթը կ'անդրադառնայ վերջին  
շրջանին խորհրդարանական եւ քաղաքական  
ընթացքին ընտրական յանձնարարութեան  
ձեւաւորման շուրջ ծագած վեճերուն։

5րդ էջով կը կարգաւոր Հայաստանի ներքին  
քաղաքական իրադրութիւններուն մասին  
հարցազրոյց մը, կատարուած Հայաստանի Ազ-  
գային Ժողովի պատգամաւոր Աղասի Արշակե-  
անի հետ։

9րդ էջով «Երկիր» կ'անդրադառնայ 27 Հոկ-  
տեմբերի գործին հանդիպում ունենալով Հա-  
յաստանի զինուորական դատախազութեան  
ընկալական բաժանմունքի պետ Արտակ Յարու-  
թիւնեանի հետ։ Վերջինս պարզաբանութեամբ կը  
կատարէ այն երեւոյթին շուրջ, թէ 27 Հոկտեմ-  
բերի գործի նախաքննութեան ընթացքին կի-  
րարուած խորթ մեթոտներուն մասին զինու-  
որական դատախազութիւնը որեւէ քայլ առա՞ծ է,  
կամ ոչ։

12րդ էջին մէջ լոյս տեսած մշակութային բա-  
ժինով կը կարգաւոր «Թատրոնը՝ որպէս հայելի  
եւ լուսարձակ» յօդուածը, որ կ'անդրադառնայ  
Մայր Թատրոնի հիմնադրման 80ամեակին։ Իսկ  
13րդ էջով «Երկիր» կ'անդրադառնայ Արցախի  
մէջ Արթուր Մկրտչեանի մահուան 10ամեակի  
ընթացքին։

### ԱՄԱԿԻ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. ԷջԸ

եան համալսարանը։  
Պէլյուրի շրջանային դատախազ Ժոզէֆ Մա-  
մարի երէկ հետեւեցան դէպքերուն շուրջ հե-  
տաքննութեան, որուն ծիրէն ներս արգելա-  
փակուած կը մնայ Ընկերակց Յառաջդիմական  
Կուսակցութեան անդամ Ժումպար Ղարիպին,  
երկու հոգի դաշունահարած ըլլալու ամբաստա-  
նութեամբ։


### ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ԵԼՈՅԹՆԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՐԵԳ»  
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ  
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ  
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ՛

### «ՀԱՆՃԱՐԻ ԱՆՃԱՐԱԿՆԵՐԸ»

Ետեւողութեամբ՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ  
Թատերագիր եւ բեմադրիչ՝  
Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Տեղի կ'ունենայ Զաբաթ, 20 Ապրիլ  
երեկոյեան ժամը 8:00ին եւ Կիրակի, 21 Ապրիլ  
կէսօրէ ետք ժամը 5:00ին, «Յակոբ Տէր  
Մելքոնեան» թատերասրահին մէջ։



# ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին։

# ԳՐԱԴԱՐԱՆՍ

Ընկեր ծորճն էր գրադարանին ընդհանուր պատասխանատուն, «գէշ» ծորճը: Այդպես կը ճանչնայինք զինք: Շատ գէշ, լեցուն եւ բարձրահասակ մարդ մըն էր, որ միշտ հեւալով կը խօսէր: Հիւանդ ըլլալու էր: Թէեւ միշտ մեր ուշադրութեան առարկան դարձուցած էինք, սակայն իր գիրութեան գաղտնիքը չէինք գիտեր: Հակառակ իր տեսքին, կ'ըսէին, թէ շատ բարի սիրտ մը ունէր:

Այդ պահուն շատեր գիրքեր կը վերցնէին, իսկ ուրիշներ կը վերադարձրէին: Ոմանք վերցնակի «տոմարները» կը թղթատէին, իսկ ուրիշներ սփիւռքեան մամուլին թերթերը աչքէ կ'անցընէին:

Ընկեր ծորճը ունէր նաեւ իր օգնականը՝ պատանի Պետիկը, որ թէ՛ մեր թաղէն էր ու թէ՛ նոյն նախկինթարանը կը յաճախէինք: Պետիկին հանդիպելով վրաս նոր շունչ մը եղաւ:

Առաջին իսկ հերթին տպաւորութիւնս այն էր, թէ Պետիկը գրեթէ գոց գիտէր բոլոր գիրքերուն թիւերն եւ անոնց դարձանքերը ու նոյնիսկ որոշ չափով տեղեկ էր անոնց բովանդակութիւններուն:

Նախանձելի էր: Ինչ լաւ բան է, կ'ըսէի մտովի, բոլոր գիրքերը կարդալ, լսել, աչքէ անցընել եւ կամ ուսումնասիրել:

Պարզ ընթացումի մը համար, կարծեմ, «Ռոպինսոն Գրուօ»ն լաւ է, այնպէս չէ՞, ընկեր ծորճը: Պետիկն էր, որ այդ վայրկեանին իր ձայնովը զիս կ'անջատէր իմ մտածումներէս եւ երիտարարի մը հարցումին իբրեւ գոհացում՝ բարձրաձայն կը կատարէր իր թելադրանքը: Իսկ ընկեր «գէշ ծորճը», առանց տեղէն շարժելու, վերէն վար աչքին ծայրովը նախ չափեց «յաճախորդը» եւ ապա տուաւ իր կարծիքը:

Այո՛, տո՛ւր: Մինչ եղբայրս տոմարներուն մէջ ինկած գիրքին թիւը կը փնտռէր, եւ չտեսի նման վերէն վար աչքէ կ'անցընէի ամբողջ գրադարանը: Հիացմունքով կը գիտէի գիրքերը, անոնց դասաւորումը, շատ յաճախ գունատ կողբերը ու նոր գագացում մը կը ծնէր ներսս:

Ահա թիւ... երկու հարեր... Պետիկը գիրքին տեղը արդէն գոց գիտէր: Իմ բախտէս գիրքը հոս էր: Շուտով գտաւ ու գայն ինծի յանձնեց:

Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

Մտեցայ սեղանին: Ընկեր ծորճ զիս քննեց եւ արագ մը երթորս բաներ մը ըսելի ետք արձանագրեց ու գիրքը ինծի յանձնեց: Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

Մտեցայ սեղանին: Ընկեր ծորճ զիս քննեց եւ արագ մը երթորս բաներ մը ըսելի ետք արձանագրեց ու գիրքը ինծի յանձնեց: Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

Մտեցայ սեղանին: Ընկեր ծորճ զիս քննեց եւ արագ մը երթորս բաներ մը ըսելի ետք արձանագրեց ու գիրքը ինծի յանձնեց: Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

Մտեցայ սեղանին: Ընկեր ծորճ զիս քննեց եւ արագ մը երթորս բաներ մը ըսելի ետք արձանագրեց ու գիրքը ինծի յանձնեց: Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

Մտեցայ սեղանին: Ընկեր ծորճ զիս քննեց եւ արագ մը երթորս բաներ մը ըսելի ետք արձանագրեց ու գիրքը ինծի յանձնեց: Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

Մտեցայ սեղանին: Ընկեր ծորճ զիս քննեց եւ արագ մը երթորս բաներ մը ըսելի ետք արձանագրեց ու գիրքը ինծի յանձնեց: Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

Մտեցայ սեղանին: Ընկեր ծորճ զիս քննեց եւ արագ մը երթորս բաներ մը ըսելի ետք արձանագրեց ու գիրքը ինծի յանձնեց: Գնա՛, ընկեր ծորճը թող արձանագրէ... Ըսաւ մտերմիկ: Այդ տարիներուն շատ ամէկտտ էի: Մայրս միշտ կ'ըսէր, որ եթէ ես այս ընթացքս շարունակէի, կեանքիս մէջ անօթի կրնայի մնալ:

դուրս ելայ, «Ազատութեան հանապարհին» ձեռքիս մէջ ամուր, «գէշ» սեղմած ու իր հերոսներէն «Վազրիկ»ին նման մէկ շունչով տուն հասա՛յ՝ ծնողքիս ցոյց տալու առաջին գիրքս:

Քանի մը տարի ետք, երբ այլեւս մինակս ակումբ երթալու ծնողքէս անգիր արտօնութեան արժանացած էի, «Քրիստափոր» գրադարանը դարձուցած էի կիրակի առաւօտեան գլխաւոր ժամադրաւորս ու զբաղումի վայրս:

«Շապիկ հագնիլ»ը ձգած էի ու անոր փոխարէն կամաւոր կերպով գիրքերու մէջ «թաղուած»:

Երբեմն շաբթուան մէջ այ կը հանդիպէի ու հոն իրարու քով կոկիկ շարուած «Ազդակ»ն ու «Մարմարա», «Արեւելք», «Յուսաբեր»ն ու «Հայրենիք»ը ոչ միայն պարզ աչքէ կ'անցընէի, այլեւ ազատօրէն «կը լսեմք» անոնց սիւնակները ու այդպէս տուն կը դառնայի:

Ճեմարանի ուսանողութեանս առաջին իսկ տարիներուն ընկեր ծորճն ու մէկ տեղեկանալով, որ ես բարեկամ դարձած էի գրադարանագրէ Պետիկին, ինծի թելադրած էր, որ առաջին իսկ առիթով անպայման կարդայի «Վոսփորի գաղտնիքը»:

«Նսեղանայիք է եւ «Վրան բաց» գիրք մըն է, աւելցուցած էր:

Միամտօրէն եւ անմեղ, նոյն կիրակին իսկ, շուտով մը գրադարանի տոմարներուն մէջէն գտնելով նշեալ գիրքին թիւը՝ բարձրաձայն Պետիկին խնդրած էի:

«Ո՞վ է այդ գիրքը ուրիշը, յանկարծ սաստիկ ու անգալարաբար վրաս կեղծանցուցած՝ բոլոր ներկաներուն ուշադրութիւնը:

«Ես, պատասխանած էի թուրք հազիւ կ'ըսէի:

«Գո՛ւ... ինչու քանի՞ տարեկան ես որ:

Ընկեր ծորճին այս հարցումը զիս իսկապէս տակնուվրայ ըրած էր: Այդ վայրկեանին կը նախընտրեմ գիրքը, մեզի կը զրկէին Նոր Գիւղ՝ տեղւոյն «Վարանգեան» գրադարանը:

Տուն եւ դպրոց միասնաբար, գրեթէ ամէն ամառ կամ ամէն արձակուրդի օր, զիս մղեցին զէպի անհատնում ընթացքիս գիրքը:

Կարդալ: Միբցուցին ընթացքը:

Կարդալ՝ մեր սենեակին մէջ, երբ հիւր չունէինք, կամ տանիքը եւ կամ հանրային պարտէզը:

Կարդալ ու ազատ ժամեր կարդալով վատնել: Յանկարծ անդարդարձաբար, որ երկար տեսնէի ի վեր չէ՞մ, նստած տեղս, աչքերս յառած եւ գամած էի գրադարանիս վրայ: Մասնաբաժնի մէջ ամբողջ բանտարկուած մնացած էր սուրճիս գաւաթը: Իսկ հեղուկը՝ շատնց պարզ: Նորածին մը ունենալէ աւելի, առաջին գաւաթի մը աշխարհ գալու գագացումով իսկապէս կարդալ:

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

«Մարտի 2 եւ վերջ» (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

«Մարտի 2 եւ վերջ» (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

«Մարտի 2 եւ վերջ» (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

պայմանօրէն կ'ուզէի կարդալ, այլեւս այս միջոցին դիմած էի: Ստելուրի միջոց չունէի: Մեծ ու պոչաւոր սուտ մը: Գիրք մը կարդալու սիրոյն ստեղծուած սուտ մը:

«Գնա՛ թող եղբայրդ գայ: Վայրկեանայէս գրադարանէն անհետացած էի: Լուրը ինձմէ առաջ արդէն մեր տուն հասնելով՝ կիրակի օրուան մեր ճաշի սեղանին զլխաւոր նիւթը դարձած էր:

Այդ օր կերակուրին հետ կարգով համտեսեցի մեծ եղբորս եւ ծնողքիս յանդիմանութիւնները՝ նախ ստեղծու ու մասնաձեւ տարիքիս անյարմար գիրք մը կարդալ փորձելու համար: Մեծ չկար մեր տան մէջ: Բայց այս մէկը ծեծէն աւելի վատ էր ու ծանր:

Տարիներ ետք, «գէշ ծորճ»ին քաղաքէն մեկնումին պատճառով, Պետիկը ինք դարձած էր գրադարանի պատասխանատուն: Ինքն ալ, իր կարգին, զիս իր օգնականը նշանակած էր:

«Պաշտօն»իս առաջին օրն իսկ ինքզինքիս իրաւունք տուած էի վերցնել այդ արգիւտած գիրքը ու աչքերովս «լսեմք» գայն: Ինչ մեծ բան:

Տղան երկարօրէն համբուրած էր աղիկը... պոռնիկը... կիսամերկ գիրքերնուցով միշտ կը պտտէր...:

Եւ աւելին՝ հազիւ նշելի ու անհասկնալի սեռային յարաբերութեան մասին քանի մը բառեր, անկապ նախադասութիւններ, որոնք անկասկած ստիպած էին ինկեր ծորճին, որ այս գիրքը «արգիւտ» պտտողներու շարքին դասէ՛ հաստատօրէն:

Ինչ անմեղ էր կեանքը այդ օրերուն:

Այդպէս ալ մեծցանք, որովհետեւ այդպէս մեզ դաստիարակեցին մեր ծնողքն ու դպրոցը, ու մանաւանդ՝ մեր ակումբը:

Կը պատահէր, որ յաճախ «Քրիստափոր» գրադարանը չունէինք մեր նախընտրած գիրքը, մեզի կը զրկէին Նոր Գիւղ՝ տեղւոյն «Վարանգեան» գրադարանը:

Տուն եւ դպրոց միասնաբար, գրեթէ ամէն ամառ կամ ամէն արձակուրդի օր, զիս մղեցին զէպի անհատնում ընթացքիս գիրքը:

Կարդալ: Միբցուցին ընթացքը:

Կարդալ՝ մեր սենեակին մէջ, երբ հիւր չունէինք, կամ տանիքը եւ կամ հանրային պարտէզը:

Կարդալ ու ազատ ժամեր կարդալով վատնել: Յանկարծ անդարդարձաբար, որ երկար տեսնէի ի վեր չէ՞մ, նստած տեղս, աչքերս յառած եւ գամած էի գրադարանիս վրայ: Մասնաբաժնի մէջ ամբողջ բանտարկուած մնացած էր սուրճիս գաւաթը: Իսկ հեղուկը՝ շատնց պարզ: Նորածին մը ունենալէ աւելի, առաջին գաւաթի մը աշխարհ գալու գագացումով իսկապէս կարդալ:

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

«Մարտի 2 եւ վերջ» (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

«Մարտի 2 եւ վերջ» (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

«Մարտի 2 եւ վերջ» (Շար. 2 եւ վերջ) «Հորիզոն»ի գրական յաւելում

# Լ. Օ. ԽԱԶԻ «ԱՆԻ» ՄԱՍՆԱԾԻՒՂԻ 30ԱՄԵԱԿ



Կազմակերպութեամբ ԼՕՈՒ «Անի» մասնաճիւղի վարչութեան, Մարտին Մամուլիէյնի «Փարուֆէ» ճարարանին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղի 30ամեակին նուիրուած հանդիսութիւն:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Մարալ վարդապետեան, որ ներկայացուց մասնաճիւղի պատմական, անոր գործունէութիւնն ու հետագրեւորած նպատակը:

Օրուան բանախօսը՝ Թուգանա Ուրիկեան անդրադարձաւ ԼՕՈՒ բարեսիրական գործունէութեան ծանրանալով անոր համամարդկային, ազգային, բարեսիրական եւ առողջապահական աշխատանքներուն վրայ: Ան նաեւ խօսեցաւ ԼՕՈՒ «Արաքսի Պուրջութեան» ընկերաբժշկական կեդրոնի անցեալի, ներկայի գործունէութեան, որոնք յոյս կը ներշնչեն ապագային:

Ռ. Ուրիկեան ըսաւ, թէ մասնաճիւղի 30ամեակը առիթ կու տայ ինքնաքննարկութեան եւ մտածելու անցեալին եկող եւ դէպի ապագայ գացող երթին եւ առաջընթացի մասին: Ան ըսաւ, թէ տարիներու ընթացքին ժառանգուած ծառայելու կտակի պահպանումը ցոյց կու տայ, թէ անցեալը ունի ամուր եւ զօրաւոր ապագայ մը:

Ապա ան ամփոփ ձեւով անդրադարձաւ ԼՕՈՒ հանգանակութեան շարժումին եւ անոր մասնակցութեան անհրաժեշտութեան:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ տարիներ շարունակ մասնաճիւղին ծառայած անդամներու պարգևատրում:

Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Անի Առուցան յուշանկերներ յանձնեց Շուշու Ալանեանի, Մարիամ Գուրգենի, Լուսին Գոնոյեանի, Էլիզ վարդապետեանի, Պայծառ Գլընճեանի, Մարի Հաւաթեանի, Գոհար Պաղճեանի, Ժրնեւ Բէլլեանի, Սիր վարդ Մկրտիչեանի, Իսկուհի Յովհաննիսեանի, Հրիսիմէ Զէյնուհեանի եւ Արշալոյս Պէլլեանի:

ԹՂՍԿԻՑ

# ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱԳ

# ԴԱՍԱԽՕՍՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Հանդիպումն տեսարան մը

Գործակցութեամբ Լիբանանի Մանուկներու Ազգային Մարմինին՝ ԼՕՈՒ Շրջանային վարչութիւնը կազմակերպեց հայ համայնքի մէջ «Ընտանեկան հարցերու լուծման մէջ» Բրիտանոնական կրօնքի պարգեւած բարեփոխող դիտանկիւնէն դիտուած բանախօսական հանդիպում մը, Չորեքշաբթի, 17 Ապրիլ 2002, յետմիջօրէի ժամը 16:00ին, «Արաքսի Պուրջութեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ՝ ներկայութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի, Լիբանանի Մանուկներու Ազգային Մարմինի վարչական կազմին, (նախագահութեամբ Նուր Մամուլի), միջբարեսիրական կազմակերպութեան ներկայացուցիչներու եւ մեծ թիւով հիւրերու:

Լիբանանեան եւ ԼՕՈՒ քայլերգներու ունկնդրութեան ետք, Շրջանային վարչութեան անունով հանդէս լեզուով բացման խօսք կատարեց Սեդա Խտուլեան, իսկ արարեքնով Մակի Խաչերեան՝ բարի գալուստ մաղթելով ներկաներուն եւ զնահատելով նման ձեռնարկներուն կարեւորութիւնը, ուր առիթը կը ստեղծուի տարբեր կրօններու իրար ծանօթացման եւ գործակցութեան:

Ապա առաջնորդ սրբազան խօսեցաւ «Ընտանիք» կառուցելու մասին, որուն ընդմէջէն անդրադարձաւ մանուկին կազմաւորման եւ դաստիարակութեան կարեւորութեան, անոր առողջ եւ համբարշխ մթնոլորտի մը մէջ աճելու, ապագայ քաղաքացին, հայրը

Շար.՝ էջ 10

# ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «ԹՈՂՆՈՅ ԲՈՅՆ»ԻՆ ՄԵՋ

Երեքշաբթի, 16 Ապրիլ 2002ին, Արամ Ա. կաթողիկոս այցելութիւն մը տուաւ «Թոլնոց Բոյն», Ժիպէյ: Վեհափառը դիմաւորուեցաւ հաստատութեան տեսուչ Մեղիկ վրդ. Բարիքեանի եւ իր օգնականներուն կողմէ: Այս այցելութիւնը, հեռու պաշտօնական հանգամանքէ, առիթ մը եղաւ մօտէն հետեւելու կատարուող աշխատանքին:

Վեհափառը շուրջ ժամ մը տեւած իր այցելութեան ընթացքին հանդիպումներ ունեցաւ աշակերտութեան, «Գայիանեան» քոյրերու միաբանութեան անդամներուն եւ այլ պատասխանատուներու հետ: Ան յատուկ կարեւորութեամբ շեշտեց քոյրերու միաբանութեան ընծայարանական նոր ուսանողութիւններուն պատրաստութիւնը եւ առ այդ, հանդիպում ունեցաւ 8 աշակերտուհիներուն հետ: Հանդիպումը առիթ մը եղաւ միաժամանակ զրուցելու հայ իգական սեռին ճամբով մեր եկեղեցւոյ ընկերային ծառայութեան ու ժողովրդանուէր աշխատանքին, որուն ցայտուն օրինակն է «Թոլնոց Բոյն»ը:

Վեհափառը իր այցելութեան աւարտին գնահատեց «Թոլնոց Բոյն»ին մէջ կատարուող աշխատանքը եւ իր օրհնութիւնը տալով՝ յաջողութիւն մաղթեց տնօրէնութեան ու հաստատութեան անձնակազմին:

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՍԼԱՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

17 Ապրիլ 2002ի առաւօտուն, Արամ Ա. կաթողիկոս կաթողիկոսարանի վեհարանին մէջ ընդունեց Լիբանանի իսլամական համայնքները ներկայացնող պատուիրակութիւն մը: Այս այցելութեան նպատակն էր ստանալ վեհափառին տեսակէտը Պաղեստինի գորակցութեան առնչութեամբ ու իսրայէլեան բռնարարներուն դէմ հաւաքական կեցուածք մը ճշդելու համահամայնքային ծրագրերի գծով:

Վեհափառը գնահատեց ի ինդիր արդարութեան ու խաղաղութեան կատարուած բոլոր աշխատանքները, շեշտեց կարելի բոլոր միջոցներով կիրակիոյ կաթողիկոսութեան գորակցութիւնը պաղեստինցի ժողովուրդին արդար դատին լուծման: «Լիբանանը միշտ եւ որեւէ այլ ե

# ՈՒՏԸ ԵՒ ՉՈՒԹԱԿԸ

Վերջերս այս սիւնակէն անդրադարձած էինք ուսուցող ֆրեզոն-յարմարակ Ռիչըրտ Յակոբեանի Պոլիսայնցութեան: Պոլիսայնցութեան կից «Մարմարա»-էն կ'իմանանք, թէ Ռիչըրտ եւ իր շուքակահար գաւազը՝ Հարոլտ, արդէն հոն են, այցելած են թերթին խմբագրատունը եւ Շաբաթ (23 Մարտի - «Ա.») երեկոյեան Պողոզի ի համալսարանին «Ալպըրթ Հոլ»-ին մէջ ելոյթ պիտի ունենան բարձրակարգ «Լայֆգար» խումբին հետ: Ռիչըրտ Յակոբեանի տալիք ելոյթին մասին ծախքը անդրադարձած էինք՝ այսպէս կոչուած «Հաշտու-թեան Յանձնաժողով»-ին մէջ «գաղտնի» եւ մշակոյթով շարքապատուած խառնածոնաբանը նկատելով գայն: Հիմա «Մարմարա»-ի լրատուութեան բերան կու գայ, որ մեր ակնարկու-թիւնը անհիմն էր: Արդարեւ, թերթը կը հաղորդէ, որ Յակոբեանները Պոլիսայնցութեան համալսարանին կողմէ: Հիմա ժապաւեկին նախ stop եւ ապա rewind կոնակները կոխենք: Եթէ թիչ մը մեր գլուխները քե-րենք, արագօրէն պիտի յիշենք, որ «Հաշտութեան Յանձնաժողով» կոչ-ւածը եւս յառաջացուած էր... Եւ այդ համալսարանին կողմէ (աւելի ճիշդ անոր անունով) եւ նոյն անու-

նով ալ ֆինանսաւորուած էր: Ըսինք՝ «անոր անունով», որովհետեւ պետա-կան բաժանմունքը բազմազարդ ըլլա-լով, ամէն տեղ չի կրնար իր ստորա-գրութիւնը հասցնել... Նոյն թերթը կը վկայակոչէ նաեւ, թէ Ռիչըրտ իր ողիմ փոխանցած է իր շու-քակահար գաւազին, որուն մասին բարձրակարգ մամուլին մէջ յօդուածներ լոյս տեսած են՝ «Ամերիկայի Նման երկրի մը մէջ թուրք երաժշտութեան ծառայած հայ յօրինողներու մասին ծայրագնակներ հրատարակ հանած ըլ-լալու կապակցութեամբ»: ԱՖերի... Նախապէս հարց տուած էինք, թէ Ռիչըրտ Յակոբեան որո՞ւ ուտը պիտի ուտագէ, Ուտի Հրանդի, թէ «Հաշտու-թեան Յանձնաժողով»-ին: Այժմ յստակացած է, թէ Ռիչըրտ - Հարոլտ գոյգը պիտի ուտագէ «Հաշ-տութեան Յանձնաժողով»-ին ուտը, բարձրակարգ մշակոյթին շուքակը՝ ընդ հովանեւ պետական բաժանմունքին կողմէ գործի լծուած Ուշիակոբեանի Ամերիկեան համալսարանին: Այս բոլորը վրան բաց կատակի չէ՞նք մեզի, գոր չհասկնալու համար թե-րեւս ծծկեր երեխայ պտը է ըլլալ:

### ՎԱՉԷ ԲՈՒՆԵԱՆ

«Ասպարեգ»

## «ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ»-ԻՆ ԿԱՐԳ ՄԸ ԹՈՒՐԲ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԵՏԲ Է ՓՈՆԱՐԻՆՈՒՅԻՆ

### Կ'ԸՍԷ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՐԱՆԵԱՆ

«Հայ - Թրքական Հաշ-տութեան Յանձնաժո-ղով»-ի անդամ Անդրանիկ Միհրանեան Շաբաթ, 13 Ապրիլին, «Ազատու-թիւն» ռատիոկայանին յայտնած է, թէ յանձնա-ժողովին հայ անդամնե-րը կը հաւատան, որ Թրքական կողմի կարգ մը անդամները պէտք է փո-խարինուին ուրիշներով՝ Հայկական Յեղափա-ռութեան ճանաչման դէմ անդադրուած կեց-ւածքին պատճառով: «Կ'ուզենք, որ Թրքական կողմը ձերբազատ իր կարգ մը անդամներին եւ նորերը նշանակէ անոնց տեղ»:

Միհրանեան պնդած է, որ յանձնաժո-ղովին ստեղծման նախա-պայմաններէն մէկն է, որ Թրքական կողմը չենք կայացուցի յայտնի անձերով, որոնք «չափա-զանց ազգայնամոլ մտնե-ցում» ունին: Թէեւ Միհ-րանեան անուն չէ տուած, սակայն, ըստ երեւոյթի, յանձնաժո-ղովի հայ անդամները դժգոհ են Օգոստէ մամ-պէրկէն եւ Կիւնտիկ Աբ-թանէն, որոնք յայտա-րարած են, թէ Թուրքիա երբեք պիտի չճանչնայ Հայկական Յեղափա-

նութիւնը: Միհրանեան շեշտած է, որ «Հաշտու-թիւնը անկարելի է առանց ճանաչումի»:

Միհրանեանի համա-ձայն, Յեղափառու-թեան ճանաչումէն աւե-լի հրատապ հարց է Հա-յաստանի շրջափակման վերացումը եւ դիւանա-գիտական կապերու հա-տատումը: Ան աւելցու-ցած է, թէ Թրքական կող-մը տասնամեակներով լրտեսած է եւ հիմա չի կրնար յանկարծ Յեղա-պանութիւնը գործած ըլ-լալու յանցանքը ընդու-նիլ՝ առանց անհայտի-կարծիքը այդ ուղղու-թեամբ պատրաստելու: Ան ըսած է, որ միայն Միացեալ Նահանգները կրնան «կակուղցնել» Թրքական կեցուածքը, որովհետեւ անոնք ունին անհրաժեշտ ուժն ու ազ-դեցութիւնը: Միհրանե-ան նաեւ շեշտած է, որ յանձնաժողովին հայ ան-դամները կը պնդեն անհր-աժեշտութիւնը երրորդ կողմի մը ուսումնասի-րութեան՝ թէ Հայկական Յեղափառութեան կը համապատասխանէ՞ ՄԱ-Կի 1948ի Յեղափառու-թեան Ուխտի տրամադ-րութիւններուն կամ ոչ:

Անդրանիկ Միհրանե-ան յայտնած է, որ Տէյ-վիտ Ֆիլիպս, որ յանձնա-ժողովի նիստերուն հա-մադրողը եղած է, կապի մէջ է երկու կողմերուն հետ՝ փրկելու համար նա-խաձեռնութիւնը:

ՉԵՒՒՔՈՉ  
«ԿԸ ՓԱՐԱՍԷ»  
ՄՍԱՀՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Հայ - Թրքական Հաշ-տութեան Յանձնաժո-ղով»-ի գործունէութեան վերաշխուժացման մա-սին շրջան ընդ լուրերը վերջերս անհանգստա-ցուցած են ազգայնա-կան քաղաքական եւ լրատուական շրջանակ-ները, ինչ որ Պաքուի մէջ Թուրքիոյ դեսպան Ու-նալ Չելիքոզը մղած է յայտարարելու, որ «Հաշ-տութեան Յանձնաժո-ղով»-ին գործունէու-թիւնը ունի անպաշտօն բնոյթ, եւ ինք տեղեկու-թիւններ չունի անոր գործունէութեան սկսումին մասին:

«Թուրքիոյ պաշտօնա-կան տեսակետը յայտնի է. մինչեւ այն ատեն որ Հայաստան տակաւին հե-ռացած չէ Ազգայնաճան-գրուած ճողերէն, Հայ - Թրքական յարաբերու-թիւններու բնականո-րանցման մասին խօսելը, աւելորդ է», ըսած է Չե-լիքոզը, ազերիներու մտահոգութիւնները «փարատելու» ճիշդ մը: Թուրք դեսպանը նաեւ հաստատած է, որ Ապրիլ 28 - 29ին Տրապիզոնի մէջ տեղի պիտի ունենայ Սե-զէր - Շեւարտանի - Ալիե կողմանեան գերաս-տիճանը: Թուրքիոյ, Վրաստանի եւ Ազգայն-ճանի նախագահները պի-տի ստորագրեն անցեալ Թուրքիոյ երեք եր-կիրներուն կողմէ մշակ-ւած փաստաթուղթը՝ Անգարայի, Թիֆլիսի եւ Պաքուի միջեւ ազգայն-չուութեան, թմրեցուցիչի մաքսանքով գոլթեան, զենքերու անօրինակա-ն առևտուրի եւ այլ տեսա-կի յանցագործութիւննե-րու դէմ միացեալ պայ-քարի եւ սահմաններու ամրապնդման մասին:

### 80 ՏԱՐԻ ԱՌԱՋ

## ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ Է ՊԵՐԼԻՆ. 17 ԱՊՐԻԼ 1922

«Ալպերն առանց լեղափոխութեան չեն կրնար ապաստի-ւապատուութիւնը նուէր չի տրուիր, կ'առնուիր. ընթացողները նուիրական բան է: Օր մը մեր ցեղը հսկայի մը պէս պիտի վերականգնի անիրաւ աշխարհին առաջ»:

ՏԻԳՐԱՆ ՉԵՕԿԻՐԵԱՆ (1884-1915)

Հայոց պատմութիւնը շատ յաճախ արձանա-գրած է մեծ աղէտներ, որոնք շատ քիչ են հա-յուրեւեակները եւ հարուածած են անոր կորովը: Սակայն 24 Ապրիլ 1915ի Մեծ եղեռնը կը գերազանցէ հին ժամանակներու բոլոր դժբախ-տութիւնները թէ՛ ծաւալով, թէ՛ անկարագրելի սար-սափներով եւ թէ՛ մանաւանդ իր արագ ու յանկար-ծական գործարարութեամբ: Ազգի մը ամբողջական բնաջնջման անբեւեակայելի ու դաժան ծրագիրն էր, որ գործարարութեան կը դրուէր, իսկ հայրենիքն ու կողոպուտը ծրագրին բնական հետեւանքները կը դառնային:

«Հայ ազգին ողնայարին իջաւ տապալը... Ամէն տարի հայութիւնը կ'անդրադառնայ այդ համազգայ-նի սուգին: Ու տակաւին շատ երկար տարիներ պի-տի ապրի այդ մորմոքը, մինչեւ որ հայ ժողովուրդը վերածնունդ գայ, որ մը, շատ հեռուէր օր մը, սպիացը-նելու մէկուկէս միլիոն հարազատներուն կորուս-տը», կը գրէր ակէ 75 տարիներ առաջ կարօ Սասու-նի:

